

Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ

«15» ՄԱՅԻՍԻ 2014 Թ. N 43-Ա ՀՐԱՄԱՆԻՑ

ՀԱՅԿԱՆՈՒՇ ՊԱՐՍԱՄՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N 1917-Ն որոշման N 1 հավելվածի 12-րդ կետի «գ» ենթակետը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

Հայկանուշ Հայկազի Պարսամյանին 2014 թվականի մայիսի 15-ից, երեք ամիս փորձաշրջանով նշանակել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի խորհրդականի ժամանակավոր թափուր պաշտոնում, մինչև ժամանակավոր թափուր պաշտոնի հիմքի վերացումը:

Աշխատավարձը՝ ըստ հաստիքային ցուցակի:

Հիմք՝ Հ. Պարսամյանի անձնական դիմումը:

Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ